Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 31-01-2001 թ. որոշմամբ
««ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ ՓՈՂ. 105
1.3 Պետական գրանցման համարը	222.160.811876
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2000-01-11
1.5 ՀՎՀՀ-ն	01506385
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10581296
	+(374)41137113
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	lwww.nuaca.am
1.8 Էլեկտրոնային փոստը	tvkarapetyan@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
ՀՀ Կառավարություն	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	

Վլադ Ասատրյան		
Նարինե Խաչատուրյան		
Ավետիք Էլոյան		
Գոհար Մամիկոնյան		
Արթուր Հովսեփյան		
Արթուր Մեսչյան		
Արմեն Ավետիսյան		
Էմիլ Մարգարյան		
Էդգար Ալեքսանյան		
Նանար Քալանթարյան		
Բագրատ Սարգսյան		
Աշոտ Վարդանյան		
Սարգիս Սարդարյան		
Մկրտիչ Մինասյան		
Գեղամ Բարսեղյան		
Արամ Դանիելյան		
Էդուարդ Խաչիյան		
Սուրեն Մխիթարյան		
Կարեն Ռաշիդյանց		
Թեմուր Մարգարյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Եղիազար Վարդանյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	16	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Դրամաշնորհ,սուբսիդիա	606471200
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Նվիրատվություն	5090515
10.1.3 Ֆիզիկական անձինք		

11. Իրականացված ծրագրերը՝	
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	0
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	0

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 4 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ASATRYANS

KRESTON INTERNATIONAL

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել «Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան» Հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան» Հիմնադրամի ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պարտականությունները ներկայացված են «Աուդիտորի պարտականությունները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ» հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հաստատված «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի» (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Հիմնադրամի նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պարտականությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագրքի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ASATRYANS LLC
Sakharov Business Center,
48/1 Nalbandyan street, 5th floor,
Yerevan 0010, Armenia
T. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
E-mail: general@asatryans.com
www.asatryans.com

ԱՍԱՏՐՅԱՆՆ ՍՊԸ
Սախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
Էլ. հասցե՝general@asatryans.com
www.asatryans.com

A Member of Kreston International | A global network of independent accounting firms
Կրեստոն Ինտերնեյշնլի անդամ | Անկախ հաշվապահական ընկերությունների գլոբալ անդամ

Այլ հանգամանքներ

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ներկայացված համադրելի տվյալները, հիմնված են Հիմնադրամի 31 դեկտեմբերի 2018թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա:

2018թ.-ի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել, ուստի մենք հիմք ենք ընդունել Հիմնադրամի կողմից տրամադրված հաշվապահական տեղեկատվությունը:

Մեզ չի հանձնարարվել իրականացնել Հիմնադրամի 2018թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում կամ կիրառել այլ ընթացակարգեր այդ ֆինանսական հաշվետվությունների հետ կապված, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Հիմնադրամի 2018թ. ֆիանասական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամի, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և

իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը

ASATRYANS

KRESTON INTERNATIONAL

նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

29 հունիսի 2020թ.

Սերգեյ Ասատրյան

Տնօրեն

ԱՍԱՏՐՅԱՆՆԵՐ ՍՊԸ (Արենստոն Արմենիա)

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Ալբերտ Ասատրյան

Առաջադրանքի ղեկավար

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2020 23:24